


**ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ  
ՇԱՆԹԱՊԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ\***

**Քանալի բառեր** - Լևոն Շանթ, հուշեր, ինքնակենսագրություն, մարդկային կերպար, քաղաքական գործունեություն, մանկավարժական գործունեություն, գրականություն, քննադատություն:



**Համագգային հայ կրթական և մշակութային հիմնադրամի ջանքերով ընթերցողի սեղանին է դրվել մի գիրք, որը Լևոն Շանթ մարդու, գրողի, մանկավարժի և քաղաքական գործչի նորովի ու համապարփակ բացահայտման ինքնատիպ փորձ է:**

Այս հրատարակությունը Շանթի հոբելյանական տարում անգնահատելի ընծա է նրա կյանքի և ստեղծագործության խնդիրներով զբաղվող բանասերների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

Խմբագրական հանձնախումբը (Վաչագան Գրիգորյան, Սերժ Սրապիոնյան, Վարդան Պետրոսյան) այս գրքով փորձ է արել ի մի բերելու Լ. Շանթի մասին տարբեր տարիների և տարբեր սերնդի մարդկանց հուշերը, նրա քաղաքական և մանկավարժական գործունեության վերաբերյալ ինքնատիպ գնահատականներն ու դիտարկումները, նաև ընտրել ու ներկայացրել է տարբեր սերնդի գրականագետների՝ Շանթին նվիրված ուսումնասիրություններից արժեքավոր պատասխաններ, որոնք ամբողջացնում են մեծ գրողի գրական ժառանգության համապատկերը:

Գիրքն արժեքավոր է առաջին հերթին նրանով, որ ներկայացված նյութերի զգալի մասը Հայաստանում տպագրվում է առաջին անգամ: Սրա պատճառներն ինքնին հասկանալի են. քաղաքական հանգամանքներով պայմանա-

*Վեմ համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020*

\* Ընդունվել է տպագրության 31.01.2020:

վորված՝ Շանթի ժառանգությունը երկար տարիներ Խորհրդային Հայաստանում արգելքի տակ էր:

Գրքի թերևս ամենաարժեքավոր հատվածը Շանթի ինքնակենսագրական պատումն է, որը ծերունագարդ գրողի շուրթերից գրի է առել Վարդգես Ահարոնյանը ԱՄՆ-ում: Այն անգնահատելի տեղեկություններ է պարունակում Շանթի մանկության, պատանեկության, Էջմիածնում ուսանելու տարիների, Կովկասում և Եվրոպայում անցկացրած ժամանակաշրջանի, քաղաքական պայքարի թոհուրոհի, ինչպես նաև իր՝ իբրև գրողի կայացման մի շարք հետաքրքիր դրվագների մասին: Փաստերից շատերը գուցե և հանրահայտ են, սակայն դրանց ներկայացումն ու գնահատումը հենց Շանթի կողմից, նրա աշխարհընկալումն ու դեպքերի հուզական վերապրումները մեծ արժեք են հաղորդում ինքնակենսագրական պատումին: Ընթերցողի առջև կենդանանում են պոստսոցիալ իրականությունը, Թիֆլիսը՝ իր մշակութային առօրյայով, «Վերնատան» անցուղարձով, եվրոպական մեծ ու փոքր քաղաքների բնաշխարհն ու մարդիկ և վերջապես՝ Առաջին հանրապետության տարիները, որոնք ճակատագրական եղան Շանթի՝ իբրև մարդու և քաղաքական գործչի ձևավորման հարցում: Կարծես ամբողջովին գրականության ու գիտության ոլորտում ապրող մարդը մտնում է մեծ քաղաքականություն՝ ստանձնելով Խորհրդարանի փոխնախագահի (ըստ էության՝ համանախագահի) պաշտոնը. «Մեծ զգուշությամբ, տոտիկ-տոտիկ սկսա իմ նախագահական պաշտոնը, մինչև որ քիչ-քիչ սկսա վարժվիլ,- պատմում է Շանթը: - Նոր տարվան տոներուն իմ վրա մնաց նախագահին կողմե կատարելիք ընդունելությանց արարողությունը, որ իմ հոգիիս չհարմարող այդ գործերուն ինչքան անհարմար կզգայի: Միայն օր մը մեծ հպարտություն զգացի, երբ պետական նախագահ չունենալուս, իբրև Պարլամենտի նախագահ՝ ես պետք է ներկայացնեի մեր պետությունը պետական տողանցքին»<sup>1</sup>:

Միմոն Վրացյանը հիշում է, որ երբ 1919 թ. ՀՅԴ Բյուրոն ձևավորում էր Հայաստանի անդրանիկ խորհրդարանի ղեկավար կազմը, շատերն էին այն կարծիքին, որ Շանթին պետք է «խնայել»: «Թող նա մնա իր մթնոլորտում, գրականության համար: Քաղաքական ասպարեզը Շանթի տեղը չէ» (65), սակայն, մյուս կողմից, հնարավոր չէր պատկերացնել նորանկախ Հայաստանի ղեկավարումն առանց Շանթի, և շուտով նա իր ծայրահեղ պարտաճանաչությամբ ու մարդկային ուղղամիտ կեցվածքով լիովին հարմարվում է այդ պաշտոնին:

Իր կամքից անկախ՝ Շանթը հայտնվում է նաև բոլշևիկների հետ բանակցելու մեկնող պատվիրակության ղեկավարի դերում: «Ամբողջ ողիսական մըն էր մեր ճամբորդությունը Բոլշևիկստանի միջով մինչև Մոսկվա, և ես, որ քանի մը տարի առաջ երկու-երեք անգամ այդ ճամբաներով գացած ու եկած էի,

<sup>1</sup> **Լևոն Շանթ. Մարդը և գործը**, Համագգային Հայ Կրթական և Մշակութային հիմնադրամ, Եր., «Տիգրան Մեծ», 2019, էջ 53: Գրքից կատարվող հետագա մեջբերումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով էջը:

զարմանքով կղիտեի կատարված ավերն ու հետադիմությունը... » (55),- ներկայացնում է Շանթն այդ օրերի տպավորությունները:

«Ետաքրքիր է, որ քաղաքական թոհուրոհով անցած գործիչը տարիներ անց, թերևս վերագնահատելով իր անցած կյանքի ուղին, հորդորում էր իր կրտսեր գրչակցին ու աշակերտին՝ Մուշեղ Իշխանին. «Դուն գրական շնորհներով օժտված տղա ես, ի՞նչ գործ ունիս կուսակցական պաշտոններու վրա... մեղք չէ՞ ուժերուդ... Պիտի գիտնաս դիմադրել, պիտի գիտնաս «ո՛չ» ըսել» (95):

Շանթ մարդու և գրողի կերպարը քայլ առ քայլ բացահայտվում է նրա ժամանակակիցների ու աշակերտների՝ Սիմոն Վրացյանի, Մուշեղ Իշխանի, Անդրանիկ Ծառուկյանի և այլոց հուշերում: «Կոճկված մարդ» այսպես են բնութագրում նրան շատերը, և այդ բնութագրման մեջ երևան է գալիս մարդկային յուրօրինակ նկարագիրը՝ խորհող, ինքնամփոփ, մարդկանց ժխորից խորշող, «ինքն իր մեջ, ինքն իրեն, իր մտքերի, իր խոհերի համար» (65): Մուշեղ Իշխանը հիշում է, որ չափի զգացումն ու ինքնամփոփ խառնվածքը նրան միշտ որոշ հեռավորության վրա էին պահում մարդկանցից: Մշտապես հավասարակշռված, փոթորկուն զգացմունքների պահերին անգամ ներքին խաղաղությունը պահող Շանթը խորապես համոզված էր, որ մարդը միշտ պետք է հավատարիմ մնա իր խառնվածքին ու կոչումին, այլապես կվերածվի իսկական ճախողակի. սա այն հավատամքն էր, որով ապրում էր գրական ու հասարակական մեծ գործիչը: Ճշտապահությունն ու աշխատասիրությունը, կանոնավորությունն ու չափավորությունը դրսևորվում էին ինչպես նրա գրական գործունեության, այնպես էլ վարքի, հագուստի, կենցաղային մանրուքների ու առօրյա հարաբերությունների մեջ: Փառասիրությունից ու ցուցամոլությունից միշտ հեռու, իր մասին բարձրաձայն երբեք չխոսող այդ մարդը խորշում էր գովասանքից այնպես, ինչպես ուրիշներն իրենց երեսին նետված վիրավորական խոսքերից: «Ծափերուն ու հրապարակային ներբողներուն հանդեպ ֆիզիքական խորշանք կզգար: Սովորություն չուներ իր ըրածին ու անելիքներուն մասին խոսելու: Թույլ ալ չէր տար, որ ուրիշներ խոսին իր ներկայության... Ամոթխած ու քաշվող չէր բնավ, բայց տանջանք էր իրեն համար իր անձին գովաբանությունը լսել... Վաթսունամյա գրական ու կրթական վաստակի տեր Շանթը ոչ իսկ մեկ անգամ հորեյանական հանդիսությանց արժանացավ: Պատճառը հայ ժողովրդի անտարբերությունը կամ ժլատությունը չէր, այլ իր ընդդիմությունը» (133),- գրում է Մ. Իշխանը:

Միևնույն ժամանակ մեր առջև բացվում է նաև մի ուրիշ Շանթ՝ կյանքի ողբերգական կողմերն արհամարհող ու երգիծող փիլիսոփան, կյանքին ավելի լայն հայացքով նայող ու գնահատող մտածողը: Աշակերտները հիշում են, որ Շանթը հաճախ էր կրկնում նույն, կարելի է ասել՝ թումանյանական խրատը. «Աշխատեցեք մա՛րդ ըլլալ. մարդը տիեզերքի բարձրագույն արժեքն է» (121):

ՎԷՆ ԽԱՆԿԱԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հիշում է ճանաչված ազգային և պետական գործիչ Կարո Սասունին, մանկավարժական գործի նկատմամբ Շանթի մեծագույն պատասխանատվությունն ու լրջագույն վերաբերմունքը պայմանավորված էին հենց այս հանգամանքով: «Կրթական և դաստիարակչական գործը բոլոր տեսակի գործերեն գերիվեր կնկատեր ճիշտ անոր համար, որ **մարդը** կկերտվեր վարժարաններեն ներս, ու մարդուն կերտիչ կհանդիսանար այն ինքնահատուկ վարպետը, որ **ուսուցիչ** կկոչվի» (116): Լինելով կրոնի նկատմամբ բավական անտարբեր՝ Շանթը, սակայն, հավատում էր մարդու գործի անմահությանը:

«Շանթը անհավատ ապրեցավ ու անհավատ ալ մեռավ, հակառակ վերջին օրերու «Նարեկին»: Միակ բանը, որուն անմահության իսկապես կհավատար, մարդուս գործն էր: Մարդեն բան չի մնար, բայց իր գործը կմնա, եթե արժեք մը ունի... » (104),- փաստում է Մ. Իշխանը:

Գրքի առավել ուշագրավ հատվածներից է Լևոն Շանթի և Նիկոլ Աղբալյանի համեմատական նկարագրի, որը ներկայացնում է Անդրանիկ Ծառուկյանը: Այս երկու նշանավոր գործիչներին, որոնք կյանքի բազում հանգամանքներով, քաղաքական-կուսակցական, գրական և մանկավարժական գործունեությամբ մշտապես կապված են եղել ու անբաժան, Ծառուկյանը պատկերավոր կերպով կոչում է «հակադիր երկվորյակներ» կամ «շեշտված հակապատկերներ»: «Դժվար է երևակայել երկու մարդեր,- գրում է նա,- որոնք կողք կողքի և ձեռք ձեռքի լծված ըլլան նույն ասպարեզին՝ մնալով հանդերձ հակոտնյա անձնավորություններ, իրարու հակապատկեր ֆիզիքապես, հոգեպես, խառնվածքով, նկարագրով, ամեն ինչով» (141): Մեր առջև մարդկայնորեն ամբողջությամբ բացվում են այդ երկու նշանավոր անձինք. Շանթը՝ կտրուկ, անզիջում ու ինքնամոխի, իսկ Աղբալյանը՝ արտաքուստ համակերպվող, զիջող ու խոնարհ: Սակայն տրամաբանական խոսքի առջև Շանթն ընկրկում էր, համոզվում, իսկ Աղբալյանը մնում էր ներքուստ անկոտրում ու համառ: Այս հակադրությունն ի հայտ էր գալիս ոչ միայն առօրյայում, այլև կուսակցական ու քաղաքական գործունեության մեջ: Տրամագծորեն տարբեր էր նաև նրանց վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի հանդեպ: Աղբալյանի համոզմամբ՝ խորհրդային բռնապետության լծի տակ ճնշված ժողովրդի խոնարհված գլուխներն ի վերջո մի օր բարձրանալու են՝ ի տարբերություն Դեր-Չորում կտրված անհամար գլուխների: Շանթն ավելի հոռետես էր. նրա համոզմամբ՝ խորհրդային վարչակարգից երբևէ որևէ բարիք սպասել չի կարելի: Ա. Ծառուկյանն իրավացիորեն նկատում է. «Ի՞նչ պիտի մտածեր արդյոք Շանթը, եթե ապրեր այսօր: Ի՞նչ պիտի ըսեր արդյոք՝ տեսնելով, որ իր թատերախաղերը 40 հազար օրինակով տպված են այնտեղ հսկա հատորով մը, և հիացական խորունկ հառաջաբանովը Գրողներու Միության նախագահ Էդ. Թոփչյանին» (159):

Մարդկային նկարագրին զուգահեռ՝ գրքի էջերից մեր առջև ոչ պակաս ամբողջականորեն հառնում է նաև գրական գործչի դիմանկարը: Հետաքրքիր

է, որ և՛ հուշագրության մեջ, և՛ գրական-քննադատական աշխատանքներում ընդգծվում է այն հանգամանքը, որ Շանթի գրականությունը նրա մարդկային կերպարի ուղղակի արտահայտությունն է, հաճախ՝ միակ քողագերծ խոստովանությունն իր մասին: Այն, ինչ արվեստագետը կյանքում չէր ցանկանում արտահայտել իր «հպարտ ամոթխածությամբ», գրականության մեջ բացահայտ հանդես է գալիս, դառնում «հեղինակի հոգիին հարազատ հայելին» (162): Գրականագետ և քննադատ Գրիգոր Շահինյանի համոզմամբ՝ «Օշին Պայը Շանթը ինքն է՝ հոգեբանության գրեթե բոլոր տարրերով... Օշին Պայը Շանթի նկարագրային գիծերու գումարն է, անհատական և հանրային երազներու կրողը և ձգտումներու արտահայտիչը» (163): Սակայն, մյուս կողմից, հայտնի է Շանթի ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքն իր քննադատների նկատմամբ: Երբ մեկը մյուսին հերթ չտալով՝ Բաքվի, Թիֆլիսի ու Կ. Պոլսի պարբերական մամուլում հայտնվում էին «Հին աստվածների» մեկնաբանությունները, Շանթն անթաքույց քամահրանքով էր վերաբերվում դրանց՝ ընդգծելով, «թե քննադատներեն ոչ մեկ հասած է իմ հոգեկան աշխարհիս իսկության և մտածումներուս ոլորտին» (103): Նրա համոզմամբ՝ գրականությունը գրողի նեղ անձնական, սուբյեկտիվ ապրումների արտահայտությունն է, որը քննադատն անկարող է ամբողջությամբ բացել, և գրողը չպետք է կուրորեն հետևի քննադատության կարծիքին, նա պետք է հավատարիմ մնա իր էությանն ու շարունակի նույն ոգով ստեղծագործել:

**Կարելի է վստահորեն պնդել, որ «Լևոն Շանթ. Մարդը և գործը» գիրքն ընթերցողի առջև իսկապես բացում է Շանթի համապարփակ նկարագիրը: Այն կարևորագույն ներդրում է Շանթի 150-ամյա հորեյանին և, անշուշտ, իր նպաստը կրելի հետագա շրջանի շանթագիտությանը:**

### **Աշխեն Էդ. Ջրբաշյան**

*Բանասիր. գիտ. թեկն.*

**Աշխեն Էդ. Ջրբաշյան** - ունի ավելի քան 40 տպագրված գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, մենագրություն, դասագիրք, թարգմանված գրքեր: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նաև գրական ժանրերի տեսության, տաղաչափության, գրական ուղղությունների, նարատոլոգիայի բնագավառները:

Էլեկտրոնային հասցե՝ ashjrbashyan@ysu.am

## A VALUABLE CONTRIBUTION IN SHANT STUDIES

Ashkhen Ed. Jrbashyan

*Candidate of Philological Sciences*

**Key words** - Levon Shant, memories, autobiography, human image, political activity, pedagogical activity, literature, criticism.

The review addresses the main issues related to the new edition of the National Armenian Educational and Cultural Fund “Levon Shant. The Man and the Work”, dedicated to the 150th anniversary of the outstanding writer. The article gives a clear idea of the content, topics and structure of this publication. The members of the editorial board (Vachagan Grigoryan, Serzh Srapionyan and Vartan Petrosyan) placed in this book the memories of the people of different generations about Levon Shant; the authors give original, noteworthy assessments of his political and pedagogical activity. In addition, the publication contains valuable excerpts from outstanding literary works dedicated to Shant, which characterize and generalize the literary heritage of the great writer and playwright.

Particularly important are those articles and materials that are published in Armenia for the first time. The reader gets a fairly complete picture of Levon Shant as a writer, politician and educator.

The most valuable material, published in this book, is the autobiographical exposition of Levon Shant, recorded by Vardges Aharonyan in the USA from the lips of an already elderly writer. The reader gets informed about Shant’s childhood and youth, about the years of his studies in Etchmiadzin, about the periods of his stay in the Caucasus and Europe, about well-known political events and about some significant episodes of his life related to his formation as a writer. Many of these facts are well known, but the assessments of L. Shant himself, his worldview and experiences give great value to the autobiographical narrative. The reader makes sense about the environment of Constantinople, Tiflis and its cultural atmosphere, the life of large and small European cities and, finally, the years of the First Republic, which became crucial for the formation of Shant as a person and politician.

We can insist that this publication is a valuable contribution to the Shant studies.

## ЦЕННЫЙ ВКЛАД В ШАНТОВЕДЕНИЕ

Ашхен Эд. Джрбашян  
Кандидат фил. наук

**Ключевые слова**-Левон Шант, воспоминания, автобиография, человеческий образ, политическая деятельность, педагогическая деятельность, литература, критика.

В рецензии рассмотрена книга «Левон Шант. Человек и дело», изданная Армянским образовательным и культурным союзом «Амазгаин» в связи с 150-летием выдающегося писателя. Статья дает четкое представление о содержании, тематике и структуре данного издания. Отмечено, что члены редакционной коллегии (Вачаган Григорян, Серж Срапионян и Вардан Петросян) поместили в этой книге воспоминания о Левоне Шанте людей разных поколений; авторами даются оригинальные, заслуживающие внимания оценки его политической и педагогической деятельности. В издании, кроме того, представлены ценные отрывки из посвященных Шанту выдающихся литературоведческих трудов, где охарактеризовано и обобщено литературное наследие великого писателя и драматурга.

Особенно важны те статьи и материалы, которые публикуются в Армении впервые. Читатель получает довольно полное представление о Левоне Шанте как писателе, политическом деятеле и педагоге.

Из опубликованных в книге новых материалов по своей ценности выделяется изложение Левонем Шантом своей автобиографии, записанное Вардгесом Агароняном в США из уст уже пожилого писателя. Читатель узнает много нового о детстве и юности Шанта, о годах его учебы в Эчмиадзине, о периодах его пребывания на Кавказе и в Европе, об известных политических событиях и о некоторых важных эпизодах его жизни, связанных с его становлением как писателя. Многие из этих фактов общеизвестны, но оценки самого Л. Шанта, его мировосприятие и переживания придают большую ценность автобиографическому нарративу. Перед глазами читателя оживают константинопольская среда, Тифлис и его культурная атмосфера, жизнь больших и маленьких европейских городов и, наконец, годы Первой Республики, которые стали судьбоносными для становления Шанта как человека и политического деятеля. Можно с уверенностью сказать, что данное издание является ценным вкладом в шантоведение.

## REFERENCE

1. **Levon Shant'.** *Mardë yev gortsë*, Hamazgayin Hay Krt'akan yev Mshakut'ayin himnadram, Yer., «Tigran Mets», 2019 (In Armenian).